600.0701.12.12.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2018 թվականի №701Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի №22Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 13-ի №210Ն որոշումը և հաշվի առնելով «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի նոյեմբերի 30-ի №4666 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հատուկ ծառայության կոդի զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №22Ա որոշման՝
   1) վերնագրում, 2-րդ կետում և 2-րդ կետով հաստատված հավելվածի վերնագրում «ծառայության կոդի» բառերը փոխարինել «ծառայությունների կոդերի» բառերով,
   2) 1-ին կետում «ծառայության «113» կոդը» բառերը փոխարինել «ծառայությունների «105», «113» կոդերը» բառերով,
   3) 2-րդ կետով հաստատված հավելվածի 4. 1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է հատուկ ծառայության՝

1) «105» կոդն օգտագործել Երևանի քաղաքապետարանի կողմից «թեժ գիծ» ծառայության կազմակերպման նպատակով.

2) «113» կոդն օգտագործել «ՍՓՅՈՒՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից մատուցվող տեղեկատվական ծառայության նպատակով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
12 դեկտեմբերի 2018թ.